

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/4

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարիամ Շուրայի Մալխասյանի 18.11.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 06.11.2014 թ-ի թիվ 1411935 վարչական ակտի վերաբերյալ:

Ա/Ձ Մարիամ Շուրայի Մալխասյանի գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ սույն թվականի նոյեմբերի 5-ին Բաբաջանյան 51/1 2ա հասցեում ՕՀՎ աշխատակիցներն իրեն ապօրինի տուգանել են:

Մարիամ Մալխասյանը համաձայն չէ տուգանքի հետ, քանի որ 04.03.2014 թ-ից համարվում է անհատ ձեռներեց:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ ՕՀՎ 06.11.2014 թ-ի թիվ 1411935 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕՀՎ 11-րդ բաժնի աշխատակիցների կողմից 05.11.2014 թ-ին կազմվել է թիվ 1411935 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում՝ մասնակցությամբ Մարիամ Շուրայի Մալխասյանի, պարզվել է, որ սույն թվականի նոյեմբերի 5-ին ժամը 17:00-ի սահմաններում կատարվել է ք.Երևան, Բաբաջանյան 51/1 2ա հասցեում վարսավիրական ծառայություններ մատուցող անձի իրերի և փաստաթղթերի հետազոտում՝ գործունեության օրինականությունը պարզելու նպատակով: Իրերի և փաստաթղթերի հետազոտմամբ պարզվել է, որ նշված ֆիզիկական անձը հանդիսանում է Մարիամ Շուրայի Մալխասյանը, հաշվառված ք.Երևան, Գարեգին Նժդեհի 13/1, բն. 24 հասցեում, ում կողմից նույն հասցեում իրականացվում էր վարսավիրական ծառայությունների մատուցում:

Ըստ Մարիամ Մալխասյանի գրավոր հայտարարության, վերը նշված ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվում է սույն թվականի նոյեմբերի 2-ից (3 օր) և տվյալ ժամանակահատվածում իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտի գումարը կազմել է 6000 դրամ: Պարզվել է նաև, որ Մարիամ Մալխասյանը ունի մեկ աշխատող՝ վարսավիր Շուշաննա Ադամյան: Տեղում պարզվել է նաև, որ Մարիամ Շուրայի Մալխասյանը չունի ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ պետական գրանցում և հաշվառված չէ հարկային մարմիններում:

Հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքները ՀՀ ՖՆ ՕՀՎ 11-րդ բաժնի պետի կողմից 06.11.2014 թ-ին ընդունվել է թիվ 1411935 վարչական ակտը, որով կիրառվել

են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին պարբերության և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 260.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ սույն գործում առկա է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից առ 03.04.2014 թ-ի քաղվածք, համաձայն որի Մարիամ Շուրայի Մալխասյանը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր:

Տվյալ դեպքում ՀՀ ՖՆ ՕՀՎ 06.11.2014 թ-ի թիվ 1411935 վարչական ակտով ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար կիրառվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին պարբերության և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասերով նախատեսված պատասխանատվության միջոցները, այն դեպքում, երբ Մարիամ Շուրայի Մալխասյանը հանդիսացել է անհատ ձեռնարկատեր:

Քննարկվող դեպքում, Մարիամ Շուրայի Մալխասյանի գործունեությունը չի կարող դիտարկվել որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, հետևապես կիրառելի չեն նաև վերոգրյալ իրավանորմերի դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ ՕՀՎ 06.11.2014 թ-ի թիվ 1411935 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

